



Պեղումների արդյունքում բացվել են առանց որոշակի հատակագծի՝ կացարաններ ու տնտեսական կառույցներ՝ խառնիխուռն դասավորությամբ, անկանոն ու ծուռուժուռ նրբանցքներով: Շենգավիթի բնակիչները ապրել են 6-8 մետր տրամագծով կլոր և քառանկյուն կացարաններում: Կլոր կացարանների պատերը ունեցել են քարե հիմքի վրա հում աղյուսե շարվածք: Բնակարանի կենտրոնում եղել է կավե կլոր շարժական օջախ՝ երեքնուկաձև խռոչներով, որոնց մակերեսը զարդարված էր բարձրադիր նախշերով: Կացարանի կենտրոնում գտնվել է քարե սյան խարիսխը, որի վրա հենվել է ձողերից ու եղեգից պատրաստված տանիքը: Սա հիշեցնում է Հայաստանի համար բնորոշ արխայիկ կացարանը՝ հայկական հագարաշենը, իսկ քառանկյունի կացարանները հավանաբար ունեցել են հարթ ծածկ: Սենյակների ներսը սալահատակված է գետաքարերով: Բացվել են նաև հացահատիկի հորեր, պեղվել է դամբարանադաշտը, որի արդյունքում հայտնաբերված գտածոները ցուցադրվում են հնավայրի պատմահնագիտական արգելոց-թանգարանում: Դրանցից ուշադրության են արժանի կոպիտ հարդախառն կավանոթների բեկորները, օբսիդիանե ու կայծքարե ցլեպները, շեղբերը, ձեռքի տանձաձև հատիչները և մանգաղի կայծքարե ներդիրները:

Գտնվել են նաև մեծ թվով այծի ու ոչխարի ոսկորներից պատրաստված հերուններ, բրիչներ, ինչը վկայում է զարգացած անասնապահության մասին: Գտածոների առկայությունը վկայում է, որ Շենգավիթի բնակիչները ունեցել են նստակյաց կենսակերպ, զբաղվել են երկրագործությամբ, հատկապես հացահատիկային կուլտուրաների մշակմամբ: Հայտնաբերվել են ցորենի ածխացած մնացորդներ: Ուշադրության արժանի են նաև բազալտե աղորիքները և քարե սանդերը՝ վարսանդներով (հավանգ), որոնցով աղացել կամ մանրեցրել են սերմնահատիկները: Գտնված քարե գուրգերը օգտագործել են որսորդության ժամանակ՝ պաշտպանական նպատակներով:



Առանձնակի արժեք են ներկայացնում պղնձե զարդերը: Կաղապարներում ձուլելով ստանում էին այնպիսի կարևոր գործիքներ, ինչպիսին էին կացիները, ուրագները, տեգերը, որոնք ավելի կատարյալ էին՝ քան քարից պատրաստվածները: Սակայն պղինձը լինելով շատ փափուկ մետաղ՝ այնքան էլ կիրառելի չէր: Նրան փոխարինելու եկավ բրոնզը: Դանբարաններից հայտնաբերվել են բրոնզե զարդեր (օղեր, ապանջաններ, քրոցներ,

ասեղներ):

Շենգավիթի խեցեղենը աչքի է ընկնում բարձր որակով: Պեղումները լույս ավել են են կարասներ, կճուճներ, գավաթներ, թասեր, սկահակներ, քամիչներ, սև, փայլեցված, կարմիր, գորշ, նարնջագույն հղկված խեցեղեն՝ երկրաչափական, նախշերով և կամ կենդանիների՝ թռչունների, այծի, ձիու, եղջերուի պատկերներով:

Շենգավիթից հայտաբերվել են հաև պաշտամունքային իրեր՝ զոհասեղաններ, հենակներ, ճրագներ, ձկան արձանիկներ (նվիրված է եղել ձկնորսության աստվածությանը և ծառայել է որպես հնայիլ): Այս ամենը վկայում են , որ տեղաբնիկներին օտար չեն եղել բնության զարթոնքին, մահվանն ու վերածննդին առնչվող ծիսական արարողությունները: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում կնոջ, տղամարդու, թռչունի, խոյի, ցուլի արձանիկները: Որպես ծիսական իր օգտագործվել է կավե խոյագլուխ կրակարանը:

Շենգավիթ բնակատեղիում իրականացվող հնագիտական ուսումնասիրությունները նոր արժեքավոր տվյալներ կտան այս եզակի հնավայրի պատմության և մշակույթի մասին: